ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

III

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-114

Ռոբերտ Օհանջանյան, *պ.գ.թ., դոցենտ*
ՀԱԻ

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀՀ-ՈՒՄ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում պրոֆեսիոնալ մշակույթի ոլորտում տեղի ունեցող գլոբալիզացիոն գործընթացների միտումներին: Այդ գործընթացը ներկայացվել է պատմական կտրվածքով՝ զուգահեռներ անցկացնելով խորհրդային և ետխորհրդային շրջանների միջև: Թեմայի հրատապությունն այն է, որ հնարավորություն է ընձեռնում բացահայտելու այլ ժողովուրդների մշակութային արժեքների տարածվածության շրջանակները ՀՀ-ում: Հատկապես կարևորվել է գրական արժեքների արտադրության և դրանց սպառման հարաբերակցության հիմնախնդիրը: Այս ուսումնասիրությունը կարող է նպաստել մշակութային ոլորտի կառույցների աշխատանքների բարելավմանը, մշակութային քաղաքականության ուղղությունների մշակմանը:

Հիմնաբառեր՝ Պրոֆեսիոնալ մշակույթ, մշակութային արժեք, տպագիր միավոր, ինստիտուտային կառույցներ, թարգմանական գրականություն, արժեքների արտադրություն, արժեքների սպառում, գրողների վարկանիշ, կարծրատիպ:

Ներածական

Արդի գիտական և հրապարակախոսական վերլուծություններում, զանգվածային լրատվամիջոցներում լայնորեն քննարկվում են *գլոբալիզացիայ*ի հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ: Կարծիքները բազմազան են և՛ դրական, և՛ բացասական առումով: Այնուամենայնիվ, ըստ առավել տարածված մոտեցումների՝ գլոբալիզացիան տարբեր երկրների միջև քաղաքական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտների ինտեգրացիոն գործընթաց է: Մարդկության առաջընթացը, արդի քաղաքակրթության ձևավորումը պայմանավորվել են տարբեր էթնիկ հանրությունների միջև զանազան կարգի արժեքների փոխանակմամբ: Այդ գործընթացներն ավելի ինտենսիվ են դարձել արդի պայմաններում, քանի որ տարբեր երկրների, էթնոսների միջև հաղորդակցության հնարավորություններն ընդլայնվել են՝ միգրացիոն գործընթացներ, զբոսաշրջություն, տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերություններ, նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ ևն:

Հայ ժողովուրդը ևս զերծ չի մնացել այդ գործընթացներից, և մեր նպատակն է՝ ուրվագծել *պրոֆեսիոնալ* մշակույթի ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների միտումները: Պրոֆեսիոնալ մշակույթի ոլորտները բազմաթիվ են՝ տպագիր արտադրանք, երաժշտություն, բեմական արվեստ, կերպարվեստ, որոնց համալիր ուսումնասիրությունը բավական բարդ է: Ուստի գլոբալիզացիոն գործընթացի մասին պատկերացում կազմելու համար ընտրվել են սահ-

մանափակ քանակով ցուցիչներ, որոնք են՝ գեղարվեստական գրական արտասահմանյան արժեքների արտադրությունը և տարածվածության շրջանակները ՀՀ բնակչության շրջանում:

Թարգմանական գրականությունը գլոբալիզացիոն գործընթացների համատեքստում արդեն քննարկվել է գիտաժողովներում[1], որտեղ ներկայացվել են թարգմանական գրականության տեսական, կազմակերպական որակին առնչվող հարցեր: Միջմշակութային հաղորդակցման գործընթացի վրա գրականությունն ազդում է նաև էթնիկ կարծրատիպերի տարածման միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի շարք ազգերի մշակույթն արտացոլող կարծրատիպերը լայնորեն տարածված են աշխարհում (ֆրանսիացիների, անգլիացիների, գերմանացիների, ամերիկացիների, ճապոնացիների), և առաջարկվել է դրանք անվանել *գլոբալ* կարծրատիպեր, իսկ հարևան ազգերինը՝ *լոկալ*[2]:

Մեր նպատակն է՝ լուսաբանել թարգմանական գրականության քանակական պատկերը, մատչելիությունը հասարակության շրջանում, գրականության տարածումն իրականացնող կառույցների աշխատանքները: Դրանք դիտարկվել են էթնիկ կտրվածքով՝ վերլուծելով գրական արժեքների թարգմանության լեզուների քանակական տվյալները: Թարգմանական գրականությունը, գրի ստեղծումից սկսած, մարդկության առաջընթացի կարևոր ուղիներից է եղել: Հայ թարգմանչությունն ունի դարավոր պատմություն, որը վկայում է համաշխարհային քաղաքակրթության ոլորտում հայ ժողովրդի ներդրման մասին: Վաղ շրջանի հայ թարգմանական գրականությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ կան: Սույն հրապարակման նպատակն է՝ խորհրդային և ետխորհրդային ժամանակաշրջանների թարգմանական գրականության խնդիրների քննարկումը, որը հնարավորություն կտա պարզաբանելու արդի ժամանակաշրջանի գլոբալիզացիոն գործընթացների զարգացումները:

Ուսումնասիրության համար մեթոդական հիմքը՝ *կոմունիկացիոն* տեսությունն է: Դրա բազմաթիվ բնորոշումներից առավել ընդունելին հետևյալն է՝ *կոմունիկացիան* ինֆորմացիայի, գաղափարների, հույզերի, հմտությունների փոխանցումն է բառերի, նկարների, գրաֆիկների և այլ միջոցներով: Կիրառական ուսումնասիրություններում առ այսօր լայնորեն օգտագործվում է տեղեկատվության տարածման մեխանիզմների *լասսուելյան* մոդելը, որն է՝ ա. ով է ուղարկում (կոմունիկատորը), բ. ինչ է ուղարկվում, գ. ինչպես են փոխանցվում (ուղիները), դ. ում է ուղղված (լսարանը), ե. արդյունավետությունը[3]:

1 Տես Թարգմանությունը որպես մշակույթների փոխներթափանցման ձգողական դաշտ: 2-րդ կլոր սեղանի նյութեր, Երևան, «Լինգվա», 2008; Թարգմանությունը միջմշակութային հաղորդակցման համատեքստում, Երևան, ԵՊՀ հրատ., 2007:

2 Кирсанова 2008, 84.

3 H. Lasswell. The Structure and Function of Kommunikation in Society, The Kommunikation of Ideas. Cd., L. Bryson, NY., 1948. Հղումն ըստ՝ Социология. Основы общей теории, Москва, «Аспект пресс», 1998, с. 297-298.

Թարգմանական գրականության արտադրության քանակական պատկերը

Թարգմանական գրականության վիճակագրությունն ուսումնասիրվել է ըստ այն մոտեցման, թե ո՞ր լեզուներից են այն թարգմանվել, և ո՞ր երկրների հեղինակների գործերն են թարգմանվել: Մեր վարկածն այն էր, որ դա հնարավորություն կտա որոշակիացնելու գլոբալիզացիոն գործընթացի տարածաշրջանային ուղղությունները: Վիճակագրական հիմնական աղբյուրներից է՝ ՀՀ ազգային գրադարանի և գրապալատի հրատարակած «Հայ թարգմանական գրականություն» մատենագիտական ծավալուն եռահատորը[4]: Գրականության տեսականին բավական մեծ է: Նկատի ունենալով ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Էթնոսոցիոլոգիայի բաժնի երկարամյա դաշտային հետազոտությունների նյութերի և մատենագիտական նյութերի համադրման անհրաժեշտությունը՝ վերլուծվել են գեղարվեստական գրականության քանակական տվյալները: Յուրաքանչյուր հատորից ընտրվել է 400 տպագիր միավոր:

Խորհրդային հենց առաջին տարիներից՝ Հայաստանում իրականացվել են թարգմանություններ: Մեր անվանի գրողները՝ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը և այլք, ակտիվ թարգմանական գործունեություն են ծավալել: Չնայած խորհրդային տարիներին գոյություն ունեցող խիստ գրաքննության պայմաններին՝ այնուամենայնիվ, զգալի աշխատանքներ են տարվել արտասահմանյան ոչ միայն ռուս, այլև այլ ժողովուրդների գրական արժեքների թարգմանության ուղղությամբ:

1967 թ. տվյալներով՝ քսան տարում ԽՍՀՄ-ում հրատարակվել է 600 վրացի, 500 հայ և ադրբեջանցի հեղինակների ստեղծագործություն: Միայն 1979 թ. հայերենով հրատարակվել է 753 տպագիր միավոր, որոնցից 265-ը՝ թարգմանական՝ 4926,3 հազ. օրինակով: Ոչ ամբողջական տվյալներով՝ 1975-1985 թթ. հայերեն թարգմանվել է 16 վրացական և 28 ադրբեջանական տպագիր միավոր գեղարվեստական գրականություն[5]: Ըստ մեր վիճակագրական տվյալների՝ 1920-1970 թթ. թարգմանվել է տարեկան 43 տպագիր միավոր գեղարվեստական գրականություն, 1971-2010 թթ.՝ 46, 2011-2020 թթ.՝ 123: Այս տվյալները ցայտուն վկայում են վերջին տասնամյակում թարգմանական աշխատանքների էական աշխուժացման մասին:

Գլոբալիզացիոն գործընթացների մասին պատկերացում կազմելու համար կարևոր է նաև այն, թե ո՞ր լեզուներից են թարգմանվել, և ո՞ր երկրների հեղինակների գործերն են թարգմանվել: 1920-1970 թթ. թարգմանվել են 12, 1971-2010 թթ.՝ 19, 2011-2020 թթ.՝ 23 լեզուներից: Այստեղ նույնպես նկատելի է նույն միտումը՝ գլոբալիզացիոն գործընթացները շարունակական բնույթ ունեն:

---

4 Տե՛ս «Հայ թարգմանական գրականության» հատորները.
Ա. «Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն, 1920-2010 Գիրք Ա, 1920-1970, «Հայաստանի ազգային գրապալատի հրատարակչություն», Եր., 2013:
Բ. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն, 1920-2010 Գիրք Բ, 1971-2010, «Հայաստանի ազգային գրապալատի հրատարակչություն», Եր., 2014:
Գ. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն, 2011-2020, Գիրք Գ, «Հայաստանի ազգային գրադարանի հրատարակչություն», Եր., 2021:

5 Печать в СССР за 50 лет. Статистические очерки, с. 105.

Նշված գործընթացների մասին պատկերացում է տալիս հատկապես կոնկրետ լեզուների քանակական հարաբերակցությունը և «միջնորդ» լեզվի խնդիրը: Խորհրդային տարիներին թարգմանությունների հիմնական մասն իրականացվել է ռուսերենից: 1920-1970 թթ. ռուսերենից հայերեն թարգմանությունների 30%-ը այլ ժողովուրդների գրողների գործեր են: Ըստ էության, այս ժամանակաշրջանում ռուսաց լեզուն եղել է մշակութային արժեքների տարածման կարևոր ուղի:

Արդի պայմաններում դրությունը զգալիորեն փոխվել է: 2011-2020 թթ. բնագրերից թարգմանությունների քանակը մեծացել է: Հատկապես կտրուկ աճել է անգլերենից թարգմանությունների քանակը: Այնուամենայնիվ, գերակշռում է ռուսերենից թարգմանությունների քանակը, սակայն այլ ազգերի գրողների ստեղծագործությունների թարգմանությունների ծավալները փոքրինչ նվազել են՝ կազմելով շուրջ 25%:

Բերված փաստերը վկայում են, որ ՀՀ գրական աշխարհում նկատվում են գլոբալիզացիոն գործընթացների ուղղությունների հակվածություն դեպի արևմտյան գրական արժեքներ:

Թարգմանական գրականության արտադրության և տարածման գործընթացը

Գրական արժեքները կարող են տարածվել զանազան կառույցների միջոցով և ուղիներով: Թարգմանական գրականության արտադրության և տարածման գործընթացն իրականացվում է բազմաթիվ կառույցների միջոցով: Հաճախ նրանք գործում են համատեղ ջանքերով: Դրանց թվում են՝ վարչական մարմինները, Գրողների միությունը, կրթական հաստատությունները, հրատարակչությունները, գրադարանները, գրախանութները, բեմական հաստատությունները, ՋԼՄ-ները:

Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ շրջանում ձևավորվել են բազմաթիվ մշակութային կազմակերպություններ, այդ թվում՝ գրական: Նրանց միջև եղել են հակամարտություններ, ուստի իշխանությունը որոշում է կայացրել կենտրոնացնել աշխատանքները: 1932 թ. մայիսի 14-ին տեղի է ունեցել Հայաստանի գրողների և արվեստի աշխատողների ժողովը, որից հետո նշված հակասությունները չեն վերացել: 1934 թ. կայացել է Հայաստանի գրողների առաջին համագումարը, և ձևավորվել՝ Հայաստանի գրողների միությունը: Համագումարում ելույթ է ունեցել Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանը, որը, նշելով այլ ժողովուրդների հետ *ինտերնացիոնալ* կապերի ամրապնդման գործում գրականության դերը, պահանջել է մեծ ուշադրություն դարձնել ռուսական և այլ գրականության հայերեն թարգմանություններին՝ բարձրացնելով դրանց որակը[6]: Այժմ Հայաստանի գրողների միությունը ծավալուն աշխատանքներ է տանում գրականության *մասսայականացման* ուղղությամբ, որը մանրամասն ներկայացված է Միության կանոնադրության մեջ: Թարգմանության ոլորտի զարգացմանը նպաստում են միության թարգմանական բաժանմունքը և

6 Худавердян 1966, 241:

«Արտասահմանյան գրականություն» հանդեսը: Թարգմանական գրականության տարածմանը նպաստում են նաև այլ ժողովուրդների գրողների հետ հանդիպումները: Դրանք հաճախ պայմանավորվում են քաղաքական, սոցիալական զանազան գործոններով: Ասվածի վառ վկայությունն է այն փաստը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո մեկուկես տասնամյակ անց՝ Ռևազ Մշվելաձեն առաջին վրացի գրողն էր, որ պաշտոնապես այցելել է Հայաստան՝ մասնակցելու Հայաստանի գրողների միության 70-ամյակին նվիրված հանդիսություններին[7]:

Թարգմանական գրականության արտադրության հիմնական կառույցները հրատարակչություններն են, որոնք զանազան միջոցներով խրախուսում են թարգմանչական ոլորտի զարգացումը: Օրինակ՝ «Անտարես» մեդիա հոլդինգը հրատարակում է «Պարտադիր ընթերցանություն», «Ինչո՞ւ և ինչպե՞ս», «Աղմուկ հանած գրքեր», «Արգելված գրքեր», «XXI», «XX դարի արձակ», «Նոբելյան մրցանակակիրներ» և այլ մատենաշարեր: Հրատարակչությունը նաև կազմակերպում է գրական մրցանակաբաշխություն:

«Զանգակ» հրատարակչությունն իր կայքէջում գրքերի դասակարգման մեջ ընդգրկել է «արտասահմանյան ժամանակակից արձակ» և «արտասահմանյան դասական արձակ» գրականությունը, բայց մյուս տեսականիների մեջ նույնպես առկա են արտասահմանյան թարգմանական ստեղծագործություններ: Սակայն արդի հրատարակությունների ծավալները, խորհրդային տարիների համեմատ, զգալի փոքր են: Օրինակ՝ Չինգիզ Այթմատովի, Նոդար Դումբաձեի ստեղծագործությունների տպաքանակը կազմում էր 20-30 հազ. օրինակ, ընդ որում դրանք հնարավոր էր ձեռք բերել միայն զարտուղի ճանապարհներով (*տակից*):

Տարածման գործընթացն իրականացնող հիմնական կառույցներից են գրադարանները: Ետխորհրդային սկզբնական տարիներին գրադարանային համակարգը բարվոք վիճակում չէր: Առավել վատթարացավ գյուղական բնակավայրերի գրադարանների վիճակը, և դրանց մի մասը փակվեց: Աստիճանաբար իրավիճակը բարելավվեց, և գրադարաններից օգտվողների քանակն ավելացավ: Այնուամենայնիվ, առ այսօր մարզային, համայնքային գրադարանները գրականության թարմացման կարիք ունեն:

Թարգմանական գրականության սպառման հիմնախնդիրները

Այլ է գրականության սպառման խնդիրը: 2014-2019 թթ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժինն իրականացրել է դաշտային հետազոտություններ Լոռու, Տավուշի, Կոտայքի և Սյունիքի մարզերի քաղաքային և գյուղական այն բնակավայրերում, որոնք ընդգրկված են եղել 1980 թ. հետազոտությունների ընտրանքում: 2023 թ. անցկացվել են նաև փորձագիտական հարցումներ Երևանում: Համեմատելով դրանց նյութերը՝ ուրվագծվում է այն պատկերը, որ գրականության սպառման փոփոխության միտումը սպառողների թվաքանակի նվազումն է [աղ. 1]:

Այս իրավիճակը կարելի է բացատրել զանազան գործոնների ազդեցությամբ: Մեր վարկածն այն է, որ խորհրդային տարիներին ազատ ժամանա-

7 Байрамян 2010, 225.

կի օգտագործման հնարավորությունները համեմատաբար սահմանափակ էին, սպասարկման ոլորտի կառույցների, զվարճավայրերի ծառայությունների աշխատանքները՝ ոչ-բավարար, և բնակչության ազատ ժամանակի կառուցվածքում ընթերցանությունը մեծ տեղ էր գրավում: Դրանից բացի, արդի գիտատեխնիկական արագ առաջընթացը նույնպես իր ազդեցությունն է թողնում գեղարվեստական գրականության ընթերցման ծավալների վրա: Գիտական, դասախոսական կազմերի հետ հարցազրույցների ընթացքում այն հարցվողները, որոնք գեղարվեստական գրականություն կարդում էին երբեմն կամ չէին կարդում, որպես պատճառ նշում էին մասնագիտական ոլորտի արագ զարգացումը՝ հիմնական ուշադրությունը բևեռելով մասնագիտական գրականության ընթերցման վրա: Իսկ ուսանողները նշում էին կրթական ծրագրերով խիստ ծանրաբեռնվածությունը:

Աղյուսակ 1.
Գրականության սպառման փոփոխությունները 1980-2014-2019 թթ.%

	1980 թ.	**2014-2019 թթ.**
կարդում են մշտապես	44,3	14,1
կարդում են երբեմն	33,6	46,0
չեն կարդում	22,1	39,9
ԸՆԴԱՄԵՆԸ	100,0	100,0

Գլոբալիզացիոն գործընթացների պատկերի կարևոր ցուցիչներից է նաև այն, թե ո՞ր հեղինակների գործերն են առավել տարածված բնակչության շրջանում: Ինչպես վկայում են աղյուսակ 2-ի տվյալները՝ այլ ժողովուրդների գրողների ստեղծագործությունների սպառման ծավալների էական փոփոխություններ չեն նկատվել: Միայն մի փոքր ավելացել է անցյալի և ժամանակակից արևմտյան գրողների վարկանիշը, ինչը խոսում է հայ իրականության մեջ արևմտյան արժեքների աստիճանական մուտքի մասին: Միևնույն ժամանակ, նկատվում են դասական գրողների նկատմամբ հաստատուն վերաբերմունքը և ժամանակակից գրողների վարկանիշի արմատական անկումը: 1980 թ. հարցումներում նշվել է 16 ռուս հեղինակի անուն. առավել հաճախ են հիշատակվել Եսենինի, Լերմոնտովի, Պուշկինի, Տոլստոյի, Չեխովի, Շոլոխովի, Գորկու անունները: Արտասահմանյան գրողների 16 անուն է արձանագրվել, որոնցից առավել տարածված են եղել Ջեկ Լոնդոնը, Դրայզերը, Բալզակը, Շեքսպիրը, Ժյուլ Վեռնը, Ստենդալը, Հյուգոն: 2

1980 թ. հարցումներում տեղ էին գտել նաև Խորհրդային Միության այլ ժողովուրդների 15 հեղինակների անուններ, որոնք իսպառ բացակայում են ետխորհրդային շրջանում: Փաստորեն, 1980-ական թթ. դասական գրողների անվանացանկը փոքր համարել չի կարելի, ինչը վկայում է արտասահմանյան արժեքների բազմազանության մասին: Այս տվյալները վկայում են նաև խորհրդային տարիների քաղաքական իրողությունները: Գործում էր խիստ գրաքննություն, և հնարավոր էր հրատարակել միայն այնպիսի ստեղծագործություններ, որոնք չէին հակասում ընդունված գաղափարախոսությանը, իսկ դասականների գործերն այդ առումով ընդունելի էին: Մասնագետ թարգմանիչների

ուսումնասիրությունից արձանագրվել են դեպքեր, երբ բնագրի թարգմանություններից հանվել են առանձին հատվածներ:

Աղյուսակ 2.
Ականավոր գրողների վարկանիշները 1980-2014-2019 թթ. %
(հարցը ենթադրում էր պատասխանների մի քանի տարբերակ, ուստի պատասխանների ընդհանուր քանակը մեծ է 100,0%-ից)

	1980 թ.	**2014-2019 թթ.**
անցյալի հայ գրողներ	58,5	79,7
հայ ժամանակակից գրողներ	30,2	5,1
անցյալի ռուս գրողներ	9,1	3,2
ռուս ժամանակակից գրողներ	1,3	0,2
անցյալի արևմտյան գրողներ	7,8	19,3
արևմտյան ժամանակակից գրողներ	1,0	2,8

Դասականների ստեղծագործությունների համեմատաբար ավելի տարածվածությունը հավանաբար պայմանավորվում է դպրոցական կրթական համակարգի՝ ուսումնական ծրագրերում նրանց ներկայացված լինելով: Դրանցում սակավ են ընդգրկվում ժամանակակից հեղինակների գործերը: Տեղեկատվության փոխանցման մյուս ուղիները նույնպես բավարար աշխատանքներ չեն տանում գրական արժեքների *մասսայականացման* ուղղությամբ: Այդ առումով ամենամեծ հնարավորություններն ունեն ԶԼՄ-ները, սակայն նրանք հեռարձակում են ավելի մեծ պահանջարկ վայելող զանազան տիպի զվարճալի հաղորդումներ, իսկ գեղարվեստականը սակավ է եթերում ընդգրկվում: Հարկ է թարգմանական գրականության տարածման ուղիների շրջանակն ընդլայնել և միջոցներ գտնել այդ աշխատանքները խրախուսելու համար: Հակառակ դեպքում հասարակության լայն զանգվածներն ընդգրկված չեն լինի առաջադեմ *գլոբալիզացիոն* արժեքների յուրացման գործընթացներում, և դրանց հաղորդակից կմնան միայն հասարակության փոքր սոցիալական շերտեր:

Ձեռքբերումները

- Առաջին անգամ փորձ է կատարվել՝ վիճակագրական վերլուծության ենթարկել թարգմանական գրականության քանակական պատկերը Հայաստանում խորհրդային վաղ շրջանից մինչև արդի ժամանակաշրջան, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու որոշ *գլոբալիզացիոն* գործընթացների միտումների մասին:
- Մեր տվյալների համաձայն՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ մշակութային կյանքի վրա քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանները կարևոր ազդեցություն են ունենում: Խորհրդային տարիների գրաքննության համակարգը վերահսկողություն էր սահմանել թարգմանչական աշխատանքների վրա՝ թույլատրելով հիմնականում արևմտյան դասական գրողների ստեղծագործությունները: Անգամ այդ պայմաններում թարգմանվել են արտասահմանյան բազմաթիվ հեղինակների գործեր, ինչը հնարավորություն է ըն-

ձեռնել հաղորդակից դառնալու այլ ժողովուրդների մշակութային նվաճումներին: Ետխորհրդային առաջին տարիներին ՀՀ մշակութային կյանքը, էական անկումներ ապրելով հանդերձ, աստիճանաբար սկսեց զարգանալ:

- Խորհրդային տարիներին արտասահմանյան հեղինակների գործերը թարգմանվում էին հիմնականում ռուսերենից: Արդի շրջանում նույնպես մեծ թիվ են կազմում ռուսերենից թարգմանությունները, սակայն էապես ավելացել են բնագրերից թարգմանությունները: Դրանց թվում առավել մեծ է անգլերենից թարգմանությունների թվաքանակը: Որոշ հրատարակչություններ քայլեր են իրականացնում խրախուսելու թարգմանական աշխատանքները, այնուամենայնիվ դրանց տպաքանակը խորհրդային տարիների համեմատ բավական սահմանափակ է:
- Գլոբալիզացիոն զարգացումների միտումները գրականության ոլորտում արդի պայմաններում փոփոխվել են: Մեծացել է արտասահմանյան գրողների թարգմանությունների թվաքանակը, ինչը վկայում է արևմտյան արժեքների տարածման մասին: Խորհրդային Միության ազգերի գրական արժեքների սպառումը որոշ չափով նվազել է:
- Համադրվել են տպագիր արտադրանքի և մեր զանգվածային հետազոտությունների տվյալներն ըստ գրողների վարկանիշների, ինչի շնորհիվ բացահայտվել է, որ բնակչության ճնշող մեծամասնությունը նշում է դասական գրողների ստեղծագործությունները, սակայն խիստ սակավ են հիշատակում և՛ արտասահմանյան, այդ թվում՝ ռուսական, և՛ հայ ժամանակակից գրողների անունները: Դրա պատճառները հավանաբար հարկ է փնտրել դպրոցական կրթության համակարգում, որը մանրամասն ուսումնասիրությունների կարիք ունի: Պետական պատկան մարմինները պետք է մշակեն ծրագրեր ԶԼՄ-ներում, դպրոցներում, բարձրագույն կրթական հաստատություններում և այլ համապատասխան կառույցներում ժամանակակից գրական արժեքների վերաբերյալ տեղեկատվություններ հաղորդելու ուղղությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

H. Lasswell. The Structure and Function of Kommunikation in Society, The Kommunikation of Ideas. Cd., L. Bryson, NY., 1948. Հղումն ըստ՝ Свциология. Основы общей теории.Изд «Аспект пресс», Москва, 1998, с. 297-298.

БАЙРАМЯН 2010,
Байрамян Г. Из страниц истории армяно-грузинских литературных связей, Ер., изд. «Гитутюн», 2010, с. 225.

КИРСАНОВА 2008
Кирсанова Е. М. О влиянии стереотипов ха процесс перевода/Թարգմանությունը որպես մշակույթների փոխներթափանցման ձգողական դաշտ: 2-րդ կլոր սեղանի նյութեր, Եր., «Լինգվա», 2008, էջ 84:

ХУДАВЕРДЯН 1966
Худавердян К. С. Культурная революция в Советской Армении. 1920-1940: Изд. «АН Арм. ССР», Ер., 1966, 241 с.

Ruben S. Ohanjanyan
Ph.D., Associate professor

SOME ISSUES OF CHANGING TRENDS IN PROFESSIONAL CULTURAL VALUES IN THE CONTEXT OF GLOBALIZATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: professional culture, print production, print copy, performing arts, author'srating, free time, institutional structures.

According to the most widespread approaches, globalization is a process of cross-integration of political, economic, cultural, social, and other spheres of life among different countries. Our task was to discuss the influences of the globalization processes taking place in the field of professional culture of the Republic of Armenia. There are many areas of professional culture: printed products, music, performing arts, and fine arts. The comprehensive study of those areas is quite complicated. Therefore, a limited number of indicators were selected to understand the globalization process. The selected indicators are the production and the scope of the dissemination of foreign literary values among the population of the Republic of Armenia. They have been viewed from an ethnic perspective, by analyzing the quantitative picture of the countries of origin representing these values. Despite the conditions of strict censorship existing in the Soviet years, a significant amount of work was done towards translating literary values. Only in 1979, 753 print units were published in the Armenian language, 265 of which were translations (4926,3 (in thousands) print copies). For the purpose of outlining the trends of change, Volume C of the trilogy "The Armenian Translational Literature" by the RA National Library and the National Book Chamber of Armenia was analyzed. 1231 print units of translational literature are listed under the chapter "Fiction and Literary Studies" presenting the time period of 2011-2020. We were able to study only 200 of them- based on the source language of the translated units. Translations were carried out from 16 languages. Meanwhile, some translations from English and Russian were the already translated works of the authors representing other countries. These facts indicate that Armenia's integration processes in the global cultural life have expanded. However, it is also important to compare the volumes of value production and consumption. In the Soviet years, the circulation number of print products was high. Nevertheless, one could acquire those books only from the grey market or in other alternative ways. For example, the circulation of Nodar Dumbadze's books was 20.000. The consumption of fiction has decreased. The data of our mass research was also compared according to the chronological perspective of the writers' ratings, as a result of which it was revealed that the vast majority of the population mentions the works of classical writers, and very few mention the names of both foreign and Armenian contemporary writers. The changing tendencies of each of these phenomena have specific reasons, for example: increasing tension in lifestyle and work, a wider range of facilities and opportunities for spending free time, the development of information technologies, the operation of institutional structures, especially the educational system, inter-ethnic communication, etc.

Рубен Самвелович Оганджанян

к.т.н., доцент

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ТЕНДЕНЦИЙ ИЗМЕНЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: профессиональная культура, печатная продукция, печатные единицы, исполнительское искусство, рейтинг писателей, свободное время, институциональные структуры.

Согласно наиболее распространенным подходам, глобализация - это процесс интеграции политической, экономической, культурной, социальной и других сфер жизни между разными странами. Нашей задачей было обсудить влияние процессов глобализации, происходящих в сфере профессиональной культуры Республики Армения. Существует множество направлений профессиональной культуры: печатная продукция, музыка, исполнительское искусство, изобразительное искусство. Комплексное изучение этих областей весьма сложно. Поэтому для понимания процесса глобализации было выбрано ограниченное количество показателей. Выбранными показателями являются производство и масштабы распространения иностранных литературных ценностей среди населения Республики Армения. Они были рассмотрены с этнической точки зрения, путем анализа количественной картины стран происхождения. Несмотря на условия жесткой цензуры, существовавшие в советские годы, была проделана значительная работа по переводу литературных ценностей. Только в 1979 году на армянском языке было издано 753 печатных единиц, из них 265 переводов в 4926,3 тысяче печатных экземпляров. С целью выявления тенденций изменений был проанализирован том 3 трилогии “Армянская переводная литература” Национальной библиотеки РА и Национальной книжной палаты Армении. В разделе “Художественная литература и литературоведение” за период 2011-2020 годов указано 1231 печатное издание переводной литературы. Нам удалось изучить только 200 из них — исходя из языка переведенных единиц. Переводы осуществлялись с 16 языков. При этом некоторые переводы с английского и русского языка представляли собой уже переведенные произведения авторов, представляющих другие страны. Эти факты свидетельствуют о том, что интеграционные процессы Армении в мировую культурную жизнь расширились. Однако важно также сопоставить объемы производства и потребления. В советские годы тираж печатной продукции был высоким. Тем не менее, эти книги можно было приобрести только на черном рынке или другими альтернативными способами. Например, тираж книг Нодара Думбадзе составил 20 тысяч экземпляров. Потребление художественной литературы сократилось. Данные нашего массового исследования сопоставлялись также по хронологическому ракурсу рейтингов писателей, в результате чего выяснилось, что подавляющее большинство населения упоминает произведения писателей-классиков, и очень немногие упоминают имена обоих — зарубежные и армянские современные писатели. Тенденции изменения каждого из этих явлений имеют конкретные причины, например: усиление напряженности в образе жизни и работе, расширение спектра объектов и возможностей для проведения свободного времени, развитие информационных технологий, функционирование институциональных структур, особенно системы образования, межнациональное общение и т.д.

Ներկայացվել է՝ 28.02.2024
գրախոսվել է՝ 09.07.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6